

Գորիս համայնքի ղեկավար
պարոն Ա. Առուշանյանին
Մ. Խորենացի փողոցի 139 տան բնակիչ
Սոնա Հարությունյանից

Դիմում

Հարգելի պարոն Առուշանյան,

դիմում եմ Ձեզ խնդրանքով՝ աջակցել մեր ընտանիքին՝ երեխայիս վիրահատության համար անհրաժեշտ գումարի տեսքով: Մեր երեք երեխաներից փոքրիկը՝ Նարեկը, ծնվել է 2024թ-ի ապրիլի 21-ին: Նրա մոտ ախտորոշվել է լեղուղիների բնածին ատրեզիա, այսինքն բացակայում են երեխայի լեղուղիներն ու լեղապարկը, ինչը, ցավոք, կյանքին վտանք սպառնացող իրավիճակ է: Բարեբախտաբար, Հայաստանում կան բժշկական հաստատություններ, որոնք իրենց արտասահանյան գործընկերների հետ կարողանում են օգնել նման խնդիր ունեցող մարդկանց. երեխաների դեպքում դա «Արաբկիր» բժշկական համալիրն է, որտեղ էլ վերահսկողության է վերցվել Նարեկը՝ ծնվելուց 5 օր անց: Այս պահին երեխան գտնվում է վիրահատության նախապատրաստական փուլում: Կատարվելու է լյարդի փոխպատվաստում: Դոնորը լինելու է ամուսինս՝ Սարգիս Գրիգորյանը: Վիրահատությունը կատարելու են «Արաբկիրի» վիրաբույժները՝ Միսակի Վիրաբուժության, տրանսպլանտոլոգիայի եւ արյունաբանության գիտագործնական կենտրոնի գործընկերների հետ՝ Օլեգ Օլեգի Ռուսմույի գլխավորությամբ: Վիրահատության օրը նախանշված է նոյեմբերի 1-ին:

Վիրահատության համար անհրաժեշտ է 19 մլն դրամ, որից 5 մլն-ը փոխհատուցում է պետությունը: Մնացած 14 մլն-ի, ինչպես նաեւ մոտ 1.5 մլն նախավիրահատական հետազոտությունների եւ հետվիրահատական դեղորայքի համար անհրաժեշտ գումարի համար դիմել ենք «Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամին», որի կազմակերպած դրամահավաքով անհրաժեշտ 15.5 մլն դրամից արդեն հավաքվել է 9 մլն 216 հազար դրամը, 6 մլն 284 հազար դրամի համար դրամահավաքը սոցիալական ցանցերով դեռեւս շարունակվում է:

Կից փաստաթղթերում Նարեկի հիվանդության էպիկրիզն ու Բժշկական համալիրի տնօրենի գրությունն են՝ ուղղված Հիմնադրամի տնօրենին, երեխայի ծննդյան վկայականի եւ իմ անձնագրի պատճենները: Կից հղումներով՝ Հիմնադրամի հայտարարությունն ու արձագանքները:

Խնդրում եմ համայնքապետարանի աջակցությունը՝ մեծ հույսով, որ ամեն ինչ հաջող կընթանա, մեր տղան Գորիսի արժանի քաղաքացի կդառնա եւ ինքն էլ ձեռք կմեկնի կողքիններին:

Հարգանքով՝
Սոնա Հարությունյան

10.10.2024թ.